ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ ԳԱՎԱԹ 2024» ՄՐՑԱՇԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

20.01.2024 16:52

Տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի կողմից կազմակերպված **«Փաստաբանների վոլեյբոլի գավաթ 2024»** վոլեյբոլի մրցաշարի առաջին փուլը:

Մրցախաղում հանդես էին գալիս փաստաբանների կողմից ձևավորված **«Փաստաբանական ակադեմիա»**, **«Արցախ»**, **«Շուշի»**, **«Հանրային պաշտպանի գրասենյակ»** և **«Լեգիտիմ»** թիմերը:

Ամփոփելով առաջին փուլի արդյունքները՝ պարզ դարձավ, որ եզրափակիչ փուլում մրցախաղը կշարունակեն **«Փաստաբանական ակադեմիա»** և **«Շուշի»** թիմերը:

Հունվարի 28-ին՝ ժամը 12:00-ին, տեղի ունենա եզրափակիչ փուլը, որտեղ հաղթանակի հավակնող թիմերն առավել հետաքրքիր և տպավորիչ խաղով հանդես կգան՝ հաղթական գավաթը նվաճելու ձգտումներով:







Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })